ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱՆ-ԽԳՀ-ԾՁԲ-2021/1 244

ք. Երևան «04» 05. 2021թ.

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Միկրո Հեկ>> ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է քաղաքացիական շինարարության համար ինժեներական նախագծման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ ներառյալ նախագծման առաջադրանքին, համապատասխան և սահմանված ժամկետներում:

1.3 Սույն պայմանագրի 2.4.5 կետով սահմանված համաձայնեցումները և դրանց արդյունքում առաջացած հավելյալ աշխատանքները չեն նախատեսում պայմանագրով սահմանված ժամկետի փոփոխություն:

1.4 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետը կարող է փոփոխվել միայն նախագծման առաջադրանքի փոփոխման դեպքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակումը իրականացնող կազմակերպությանը (այսուհետ՝ Կատարող) ապահովել խորհրդատվական ուղեկցում <<ВНИИРА-ОВД>> ՓԲԸ–ի կողմից:

2.2.4 Նախագծային փաստաթղթերը և ինժեներական հետազոտությունների արդյունքները համաձայնեցնել <<ВНИИРА-ОВД>> ՓԲԸ հետ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

2.4.4 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.5 Նախագծային փաստաթղթերը և ինժեներական հետազոտությունների արդյունքները էլեկտրոնային փաստաթղթերի տարբերակով համաձայնեցնել Պատվիրատուի հետ, իսկ վերջինս կողմից <<ВНИИРА-ОВД>> ՓԲԸ հետ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն

սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.1.1 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն ծառայության արդյունքը ներկայացնում է փորձաքննության: Եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն 15 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, որից հետո Պատվիրատուն ծառայության արդյունքը ներկայացնում է փորձաքննության:

3.1.2 Փորձաքննության արդյունքում փորձաքննողի կողմից տրամադրվում է դրական կամ բացասական եզրակացություն, որը Պատվիրատուն տրամադրում է Կատարողին: Պատվիրատուն, փորձաքննության բացասական եզրակացություն ստանալու դեպքում, 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և փորձաքննության բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, որից հետո Պատվիրատուն վերջնական արդյունքը ներկայացնում է փորձաքննության:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն փորձաքննության դրական եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը, դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը և փորձաքննության դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Պայմանագրի ամբողջական կատարման համար հիմք է հանդիսանում նախագծային փաստաթղթերի և ինժեներական հետազոտությունների արդյունքների պետական փորձաքննության դրական պատասխանի հիման վրա կազմված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8 320 000 (ութ միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու և 3.1 կետով սահմանված յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը(5.3 կետի ա) և բ) ենթակետեր) խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

ա) Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետ. սույն պարագայում ուշացված աշխատանքային օրերի քանակը որոշվում է՝ համաձայն Պատվիրատուի կողմից ծառայության արդյունքի շտկված տարբերակը ընդունելու փաստը ֆիքսող 3.1.1 կետում նշված գրությամբ, ինչպես նաև 3.1 կետում սահմանված ժամկետը

բ) Փորձաքննության ժամկետ՝ տվյալ դեպքում տույժի վճարման սկզբնաժամկետ է համարվում 3.1.2 կետում նշված փորձաքննության բացասական եզրակացությունը Պատվիրատուի կողմից Կատարողին 3.1.2 կետով սահմանված կարգով տրամադրելու հաջորդող աշխատանքային օրը, իսկ ուշացված աշխատանքային օրերի քանակը որոշվում է՝ համաձայն պայմանագրի 3.2 կետով սահմանված՝ Պատվիրատուի կողմից ստորագրվող եզրակացության:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում

սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **6** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պատվիրատու»	**«Կատարող»**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	**«Միկրո ՀԷԿ» ՍՊԸ**
Երևան-42, Ի. Գասպարյան 33	**ՀՀ., ք. Երևան, Կոմիտասի պ.,24/2 շ., 28**
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	**Հ/Հ 1570019984160100 ՀՀ դրամ**
ԱՇԻԲ «Զկարթնոց» մաս.	**«Ամերիա Բանկ» ՓԲԸ**
ՀՎՀՀ 01216144	**ՀՎՀՀ 00123385**
Գլխ. տնօրեն	**Տնօրեն**
_____Ա. Գասպարյան	**_____Ա. Կարապետյան**

Հավելված N 1
« 04 » 05. 2021 թ. կնքված
ՀԱՆ-ԽԳՀ-ԾՁԲ-2021/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության								
հ/հ	ԳՄԱ ծածկագիր՝ CPV	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Չափ□ միավ	Ընդհ□ գինը/ՀՀ դրամ	ընդհ քանակ	մատուցման	
							հասցեն	Ժամկետը
1	71321160/2	քաղաքացիական շինարարության համար ինժեներական նախագծման ծառայություններ	Գնման առարկա է հանդիսանում <<ВНИИРА-ОВД>> ՓԲԸ–ի կողմից տրամադրված ակտի և տեխնիկական առաջադրանքների հիման վրա նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ինժեներական հետազոտությունների իրականացման աշխատանքների ձեռքբերումը: **Բնութագրիր** Մոնոիմպուլսային ռադարի տեղադրման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, գյուղ Ուրցալանջ, <<Անդրանիկ>> վերահաղորդիչ կայան, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2150մ: Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում և ինժեներական հետազոտությունների իրականացում <<Անդրանիկ>> վերահաղորդիչ կայանի հողամասի սահմաններում մոնոիմպուլսային ռադարի սարքավորումների կոնտեյների և ռադարի (անտենային) աշտարակի տեղադրման նպատակով: Աշխատանքներն իրենց մեջ ներառում են մոնոիմպուլսային ռադարի տեղակայման համար անհրաժեշտ կառույցների շինարարական աշխատանքների իրականացման նպատակով <<ВНИИРА-ОВД>> ՓԲԸ–ի կողմից տրամադրված ակտի, տեխնիկական առաջադրանքների և անտենային աշտարակի անձնագրի (տեխնիկական տվյալների) հիման վրա՝	դրամ	8 320 000	1	ՀՀ Արարատի մարզ գյուղ ՈՒրցալանջ <<Անդրանիկ>> վերահաղորդիչ կայան	*Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 40 օր*

			ինժեներական հետազոտություններ համապատասխան հաշվետվությունների տրամադրմամբ, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում, ներառյալ նյութերի մասնագիրը: <<ВНИИРА-ОВД>> ՓԲԸ–ի կողմից տրամադրված ակտը, տեխնիկական առաջադրանքները և անտենային աշտարակի անձնագիրը (№0720/КР) ներկայացված են հրավերին կից pdf՝ ձևաչափով (բնագրով՝ ռուսերեն և հայերեն թարգմանությամբ): Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը պետք է ներկայացվեն թղթային և էլեկտրոնային տարբերակներով, համաձայն առաջադրանքի պահանջներին: <<Անդրանիկ>> վերահաղորդիչ կայանի հողամասի համապատասխան վկայականի պատճենը ներկայացվում է Կատարողին՝ ըստ պահանջի: Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակումը իրականացնող կազմակերպությանը (այսուհետ՝ Կատարող) Պատվիրատուն պարտավոր է ապահովել խորհրդատվական ուղեկցում <<ВНИИРА-ОВД>> ՓԲԸ–ի կողմից: **Գնման առարկայի պահանջվող ծավալ** Կատարողը, Պատվիրատուի կողմից տրամադրված ակտի և տեխնիկական առաջադրանքների հիման վրա պետք է իրականացնի՝ 1. Ինժեներական հետազոտություններ, եզրակացության տրամադրմամբ՝ – Գեոդեզիական ինժեներական հետազոտություններ – Ինժեներա-երկրաբանական հետազոտություններ – Սեյսմիկ միկրոզոնացման աշխատանքներ;					

			2. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում, ներառյալ նյութերի մասնագիրը: 3. Ռադարի սարքավորումների տեղադրման կոնտեյների և ռադարի (անտենային) աշտարակի հողանցումը պետք է իրականացվի երկու անկախ հողանցման հանգույցներով: Նախագծային փաստաթղթերը և ինժեներական հետազոտությունների արդյունքները ենթակա են պետական փորձաքննության: Նախագծային փաստաթղթերը և ինժեներական հետազոտությունների արդյունքները փորձաքննության ներկայացնելուց առաջ, էլեկտրոնային փաստաթղթի տեսքով համաձայնեցվում են Պատվիրատուի, իսկ վերջինիս կողմից <<ВНИИРА-ОВД>> ՓԲԸ հետ:					

«Պատվիրատու»
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

_____ Ա. Գասպարյան

«Կատարող»
«Միկրո ՀԷԿ» ՍՊԸ
ՀՀ., ք. Երևան, Կոմիտասի պ.,24/2 շ., 28
Հ/Հ 1570019984160100 ՀՀ դրամ
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00123385
Տնօրեն

_____ Ա. Կարապետյան

Հավելված N 2
«04» 05. 2021 թ. կնքված
ՀԱՆ-ԽԳՀ-ԾՁԲ-2021/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71321160/2	քաղաքացիական շինարարության համար ինժեներական նախագծման ծառայություններ								8 320 000	8 320 000	8 320 000	8 320 000	8 320 000	8 320 000

Պայմանագրի ամբողջական կատարման համար հիմք է հանդիսանալու նախագծային փաստաթղթերի և ինժեներական հետազոտությունների արդյունքների պետական փորձաքննության դրական պատասխանի հիման վրա կազմված հանձնման-ընդունման արձանագրությունը:

«Պատվիրատու»
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
Երևան-42, Ի. Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մաս.
ՀՎՀՀ 01216144
Գլխ. տնօրեն

Ա. Գասպարյան

«Կատարող»
«Միկրո ՀԷԿ» ՍՊԸ
ՀՀ., ք. Երևան, Կոմիտասի պ.,24/2 շ., 28
Հ/Հ 1570019984160100 ՀՀ դրամ
«Ամերիա Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00123385
Տնօրեն

Ա. Կարապետյան

Հավելված 3
« 04 » 05. 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

____

____

գտնվելու վայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

Պատվիրատու

____

____

գտնվելու վայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

____
ստորագրություն

____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«04» 05. 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն